Վահան Տերյան

Դու եկար սպիտակ շորերով

Դու եկար սպիտակ շորերով,
Երբ ձմռան երկոն իմ սրտում
Իր թախիծն էր փռում ու տրտում
Ժպտում էր մշուշոտ շողերով...

Եվ այնպես անվերջ էր ու դանդաղ
Գիշերիս տաղտկությունը մեռած,
Երբ քնքուշ նետեցիր դու վրաս
Մի անուշ, արբեցնող շամանդաղ:

Փողոցում ձայն չըկա, և իմ տան
Դռները ես ամուր եմ փակել.
Միայն դու կարող ես ինձ փրկել
Օրերից հուսաբեկ ու տարտամ:

Ցաված է իմ հոգին ու մենակ
Ձանձրությամբ է լցված մահացու,
Եվ դառն է անունն իմ աստըծու,
Եվ աղոթքըս թունոտ մի դանակ...

Հայտնվի՛ր լուսեղեն ու գերող,
Քո փայլը ծավալիր սև կյանքում,
Ամոքիր գիշերներըս անքուն

Քո մաքուր, քո անուշ երգերով...